PRESS RELEASE

PR22/77

ԱՄՀ-ն աշխատակազմի մակարդակով համաձայնություն է ձեռք բերում Հայաստանի «Պահուստային ծրագրի» շրջանակում վեցերորդ ամփոփիչ ստուգման շուրջ

Անհապաղ հրապարակման համար

Առաքելության ավարտին կազմվող մամուլի հաղորդագրությունները ներառում են ԱՄՀ աշխատակազմի թիմերի հայտարարությունները, որոնք երկիր կատարած այցից հետո ներկայացնում են նախնական եզրահանգումները: Սույն հայտարարության մեջ արտահայտված են ԱՄՀ աշխատակազմի տեսակետները և պարտադիր չէ, որ ներկայացնեն ԱՄՀ Գործադիր խորհրդի տեսակետները: Առաքելության նախնական եզրահանգումների հիման վրա աշխատակազմը կկազմի զեկույց, որը ղեկավարության կողմից հաստատվելու դեպքում կներկայացվի ԱՄՀ Գործադիր խորհրդին՝ քննարկման և որոշման կայացման համար:

- Հայաստանի ծրագրի 6-րդ ամփոփիչ ստուգման եզրահանգմամբ՝ Հայաստանի տնտեսական դիրքն ավելի ուժեղ է, սակայն, միևնույն ժամանակ նշանակալի է Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության ազդեցությունների տարածման հետևանքով Հայաստանի համար առաջացող անորոշությունը:

- Քաղաքականության առաջնահերթություններն են՝ մակրո-ֆիսկալ և ֆինանսական կայունության պահպանումը, շարունակվող արտաքին ցնցման ազդեցության մեղմումը և կառուցվածքային բարեփոխումների շարունակումը՝ ավելի բարձր և ավելի ներառական աճի խթանման համար:

Վաշինգտոն, ԿՇ – 2022 թ.մարտ 17: Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) թիմը, Թանոս Արվանիտիսի գլխավորությամբ, 2022 թ. մարտի 1-ից 16-ն անց է կացրել ԱՄՀ
«Պահուստային ծրագրի» (SBA) աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի տնտեսական ծրագրի վեցերորդ ամփոփիչ ստուգումը: «Պահուստային ծրագիրը» հաստատվել է 2019 թ. մայիսի 17-ին և ավարտվում է 2022 թ. մայիսի 16-ին: Քննարկումների ավարտին՝ պրն. Արվանիտիսն արել է հետևյալ հայտարարությունը.

«ԱՄՀ թիմը Հայաստանի իշխանությունների հետ աշխատակազմի մակարդակով համաձայնության է եկել «Պահուստային ծրագրի» աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի տնտեսական ծրագրի վեցերորդ և վերջին ամփոփիչ ստուգումը եզրափակելու շուրջ: Համաձայնությունը ենթակա է հաստատման ԱՄՀ գործադիր խորհրդի կողմից, որը սույն ամփոփիչ ստուգումը նախատեսում է դիտարկել մայիսի կեսին: Խորհրդի նիստից հետո հասանելի կդառնա շուրջ 36 միլիոն դոլար (25.716 միլիոն ՓՀԻ)՝ ծրագրի շրջանակում ընդհանուր հատկացումները հասցնելով մոտ 430 միլիոն դոլարի:

«Հայաստանի տնտեսությունը շարունակել է վերականգնվել՝ արձանագրելով 5.7 տոկոս աճ 2021 թ. և շարունակելով բարձր աճը 2022 թ. սկզբին: Տարեկան ՍԳԻ գնաճը կայուն նվազել է՝ փետրվարին կազմելով 6.5 տոկոս, ինչին աջակցել է դրամավարկային քաղաքականության խստացումը: Հարկաբյուջետային քաղաքականությունն օգնել է

700 19th Street NW
Washington, DC 20431
USA

վերջին երկու տարիներին տնտեսության վրա ցնցումների ազդեցության մեղմմանը, սակայն շարունակել է խարսխված մնալ պարտքի կայունության ավելի ընդգրկուն նպատակի վրա, իսկ հարկային քաղաքականության և վարչարարության բարեփոխումներով շարունակվում է հարկման բազայի ընդլայնումը: 2021 թ. բյուջեի դեֆիցիտը նվազեց մինչև ՀՆԱ-ի 4.7 տոկոսը՝ հիմնականում կառավարության ավելի ցածր ծախսերի հաշվին: Արտաքին դիրքն ամրապնդվել է, հատկապես՝ 2021 թ., քանի որ Քովիդ-19-ի համավարակի ընթացքում ընթացիկ հաշվի պակասուրդը նվազեց, բարձր դրամական փոխանցումները պահպանվեցին, իսկ եվրապարտատոմսերի թողարկմամբ և ՓՀԻ (փոխառության հատուկ իրավունք) հատկացմամբ միջազգային պահուստները համալրվեցին: Բանկային համակարգը մնացել է համարժեք կապիտալով համալրված և իրացվելի, իսկ ակտիվների որակը բարելավվել է:

«Ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով տարածվող տարածաշրջանային և համաշխարհային տնտեսական ազդեցությունները, սակայն, հեռանկարի վրա ճնշում են առաջացնում, և անխուսափելիորեն նկատելի ներգործություն կունենան Հայաստանի վրա: Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների լայն շրջանակը, սննդամթերքի և վառելիքի ավելի բարձր գները, նվազ դրամական փոխանցումները, համաշխարհային ֆինանսական շուկայի տատանողականության աճը սպասվում է, որ առաջիկա ամիսներին կընդլայնեն ընթացիկ հաշվի պակասուրդը, կհանգեցնեն գնաճի բարձրացմանը և կնվազեցնեն տնտեսական աճը: Թեև Հայաստանի վրա ազդեցության չափի մասով զգալի անորոշություն կա, քանի որ իրավիճակը դեռևս զարգանում է, մեր նախնական գնահատականով տնտեսությունը 2022 թ. կարող է աճել շուրջ 1½ տոկոսով՝ շատ ավելի դանդաղ տեմպով, քան նախկինում էր սպասվում:

«Հայաստանի վրա տարածվող տնտեսական անբարենպաստ ազդեցությունները մեղմելու համար անհրաժեշտ է, որ իշխանությունները շարունակեն թույլ տալ, որ փոխարժեքը գործի որպես ցնցման կլանիչ և դրամավարկային քաղաքականությունը ճշգրտեն՝ զսպելու ներմուծման ավելի բարձր գների և առաջարկի կողմում խաթարումների հետևանքով առաջացող երկրորդային ազդեցությունները՝ հաշվի առնելով հեռանկարի ձևավորվող գնահատականը: Այս համատեքստում ՀՀ ԿԲ-ն քաղաքականության (վերաֆինանսավորման) տոկոսադրույքները մարտի 15-ին բարձրացրեց 125 բազիսային կետով: ՀՀ ԿԲ-ն ուշի-ուշով մշտադիտարկում է բանկերի իրացվելիության դիրքը և վարկային ռիսկերը և կձեռնարկի անհրաժեշտ ցանկացած միջոցառում՝ համապատասխան երաշխիքներով ֆինանսական համակարգի կայունությունն ապահովելու համար: Բյուջեի դեֆիցիտի և կառավարության պարտք-ՀՆԱ հարաբերակցության վրա ցնցման ազդեցությունները զսպելու համար ծախսերի պահուստային ֆոնդը ողջամտորեն կօգտագործվի, իսկ ոչ առաջնահերթ ծախսերը կկրճատվեն: Կարևոր է նաև, որ անապահով տնային տնտեսություններին և կենսունակ ընկերություններին ուղղվող պետական ցանկացած աջակցություն լինի ժամանակավոր և հասցեական:

«Մոտակա ժամանակահատվածից հետո առանցքային է քաղաքականության և բարեփոխումների հիմնավոր ջանքերի պահպանումը: Ասվածը ներառում է հարկաբյուջետային միջնաժամկետ շրջանակի բարելավումը և կառավարության պարտք-ՀՆԱ հարաբերակցության տեղափոխումը նվազման գոտի՝ հարկաբյուջետային կանոններին համահունչ, Կենտրոնական բանկի նպատակադրած 4 տոկոսի ուղղությամբ գնաճի նվազեցումը, ֆինանսական կայունության երաշխավորումը և կայուն, կանաչ և ներառական աճի ապահովումը: Այս նպատակների իրագործման համար կարևոր է վերջերս հաստատված՝ հանրային ներդրումների կառավարման մասին որոշման լիարժեք գործողությունը, ՊՄԳ գործառնական շրջանակի ամբողջացումը,

հանքարդյունաբերության հարկման պրոգրեսիվ համակարգի ներդրումը, որը հրաժարվում է գնի վրա հիմնված ռոյալթիի սանդղակից և արտահանման ժամանակավոր մաքսատուրքերից՝ ներդրումների ապահովագրումից խուսափելու համար, հարկաբյուջետային ռիսկի կառավարման, թափանցիկության ու կառավարման համակարգի ամրապնդումը և բիզնես միջավայրի բարելավումը՝ միևնույն ժամանակ հնարավորություն ստեղծելով աճին նպաստող, եկամուտներն ավելացնող հարկային քաղաքականության, ընթացիկ ծախսերի առաջնահերթության սահմանման և հանրային ներդրումների որակի բարձրացման ու սոցիալական պաշտպանության կատարելագործման միջոցով:

«ԱՄՀ թիմը շնորհակալություն է հայտնում Հայաստանի իշխանություններին, մասնավոր հատվածին և զարգացման գործընկերներին՝ արգասաբեր քննարկումների և համագործակցության համար»: